«Ազգերի ինքնորոշումը նշանակում է, որ մի հողամասի վրայ մեծամասնութիւն կազմող ամէն մի ազգութիւն իրաւունք ունի ինքնուրոյն պետութիւն կազմելու»: Իսկ սրա սահմանիներում գոնուող (ազգային) փոքրամասնութիւնները, եթէ չեն ուզում, կամ աշխարհագրական պայմանների շնորհիւ չեն կարող միանալ իրենց ազգային պետութեանց՝ պէտք է հովանաւորուին ազգային-մշակոյթային տեսակէտից նոյն իրաւունքներով, որ ունի այդ ասպարէզում ազգային մեծամասնութիւնը: Ահա այս նկատումներով, Վրաստանի Սահմանադիր Ժողովը, ազգային փոքրամասնութիւնների համար, ընտրել է Սահմանադրութեան մէջ ազգային-մշակոյթային ինքնավարութիւնը՝ հիմք ունենալով թէ՛ տերրիտորիալ ինքնավարութիւնը եւ թէ՛ (ցրուած ազգային) անհատների համախմբումը՝ ի հաշիւ պետական եւ տեղային բիւդջէների»*):

Մեր խնդրից դուրս է Վրաստանի Սահմանադրութեան յօդուածների վերլուծութիւնը: Դրա համար էլ բաւականանում ենք վերհանելով այս տողերի մէջ արտայայտուած սկզբունքային կէտերը, որոնք հինգ հատ են:

1· Ամէն մի ազգային փոքրամասնութիւն, որ աշխարհագրօրէն կպած է իր ազգային պետութեանը՝ իրաւունք ունի այդ պետութեանը միանալու եթէ միայն ցանկանում է միանալ:

2· Ամէն մի ազգային փոքրամասնութիւն, որ աշխարհագրօրէն կպած չէ իր ազգային պետութեանը, բայց համախմբուած ապրում է որոշ հողամասի վրայ՝ իրաւունք ունի ոչ միայն ազգային-մշակոյթային ինքնավարութիւն, այլ եւ տերրիտորեալ ինքնավարութիւն ստանալու:

3· Այս երկու կարգից դուրս դտնուած ազգային փոքրամասնութիւնը, որ ցրուած ապրում է պետութեան այլեւայլ մասերում, իրաւունք ունի արտահողային ազգային միութիւն կազմելու եւ, որպէս այդպիսին, ազգային-մշակոյթային ինքնավարութիւն ստանալու:

4· Ազգային փոքրամասնութեան թէ՛ հողային ինքնավարութիւնը եւ թէ՛ ազգային-մշակոյթային ինքնավարութիւնը նոյն իրաւունքներով պէտք է օժտուած լինեն, որոնցով օգտւում է մեծամասնութիւն կազմող ժողովուրդը այդ երկու մարզերի մէջ:

5· Ազգային փոքրամասնութեան հողային ինքնավարութեան եւ ազգային-մշակոյթային ինքնավարութեան ծախսերը պէտք է հոգացուեն պետական եւ տեղական բիւդջէներից ընդհանուր կարգով, առանց մասնաւոր տուրքերի ենթարկելու ազգային փոքրամասնութիւնը այն կարիքների բաւարարման համար, որոնց համար մեծամասնութիւն կազմող ժողովուրդի վրայ մասնաւոր տուրքեր չեն դրւում:

Եթէ ճիշդ ենք ձեւակերպում վերոյիշեալ ցիտատում արտայայտուած մտքերը — իսկ մենք կարծում ենք, որ տառացիօրէն ճիշդ ենք ձեւակերպում — կը նշանակէ մաղաչսի տարակարծութիւն անգամ չկայ մեր եւ Ժորդանիայի միջեւ ազգային փոքրամասնութիւնների հարցում:

Տեսնենք այժմ, թէ գործնական ի՞նչ լուծումն կը ստանայ վիրահայ ազգային փոքրամասնութեան հարցը, եթէ այդ լուծումը կատարուի համաձայն Ժորդանիայի սկզբունքային տեսակէտների:

Առաջին՝ Ախալքալակի եւ Հայկական Բորչալուի հայութիւնը, որ աշխարհագրօրէն կպած է Հայաստանին առանց որեւէ անջրպետի՝ կը միանայ Հայաստանին, որովհետեւ նա քանիցս արտայայտել է, որ ցանկանում է միանալ: Եթէ վրացիք պահանջեն՝ կարելի է նորից ստուգել այս ցանկութիւնը ժողովրդական հանրաքուէով (ռեֆերենդում):

Երկրորդ՝ Թիֆլիս դաւառի, վրացական Բորչալուի եւ յարակից շրջանների հայութիւնը, որ ազգային հոծ մեծամասնութիւն է կազմում որոշ հողամասի վրայ՝ կը ստանայ հողային ինքնավարութիւն:

Երրորդ՝ Վրաստանի քաղաքներում ապրող վիրահայ քաղաքացիները ոեւէ կաշկանդումի չեն ենթարկուի համայնական գործե-

*) Տե՛ս «Դնի» 1928 թ. Փետրուար 9-ի համարում Ժորդանիայի «Սկզբունքներ եւ փաստեր, պատասխան Ա. Ջամալեանին» յօդուածը: Բոլոր ընդգծումները եւ փակագծերի մէջ առնուած բացատրական խօսքերն իմն են:
Ա. Ջ.